

Ժամկետային ավանդի տոկոսագումարի հաշվարկման բանաձևը և ներկայացուցչական օրինակ

Տոկոսագումարի հաշվարկը օրական կտրվածքով կատարվում է հետևյալ բանաձևով¹

Մայր գումար x Տոկոսադրույք

365 (կամ 366 նահանջ տարվա դեպքում)

Մայր գումարը դա տվյալ օրվա դրությամբ ժամկետային ավանդի մնացորդն է: Տվյալ օրվա դրությամբ Մայր գումարը կարող է կազմված լինել Ավանդի սկզբնական գումարից, կապիտալացված տոկոսագումարից (կուտակային ավանդների դեպքում), կուտակային ավանդի պարբերական ներդրումների գումարից (կուտակային ավանդների դեպքում):

Տոկոսադրույքը տվյալ ավանդի և ժամկետի համար սահմանված տարեկան անվանական տոկոսադրույքն է:

Ներկայացուցչական օրինակ.

- Ավանդի սկզբնական գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
- Ավանդի ժամկետ՝ 6 ամիս (183 օր)
- Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 5%
- Հաշվետու տարվա օրերի քանակ՝ 365
- Ավանդի բացման ամսաթիվ՝ 01/06/2018
- Ավանդի վերջնաժամկետ՝ 03/12/2018

Ժամկետային ավանդի վերջնական մնացորդի հաշվարկ.

Հաշվարկված տոկոսագումար¹ ավանդի ամբողջ ժամկետի համար = $1,000,000 \times 5\% \times 183 \times (1/365) = \text{AMD } 25,068.49$ ՀՀ դրամ

Տոկոսային եկամտից հարկ 10% = $25,068.49 \times 10\% = \text{AMD } 2,506.85$ ՀՀ դրամ

Վճարված զուտ տոկոսագումար = $25,068.49 - 2,506.85 = 22,561.64$ ՀՀ դրամ

Ավանդի վերջնական գումարը ավանդի ժամկետի վերջում = Մայր գումար + զուտ տոկոսագումար = $1,022,562$ ՀՀ դրամ

¹Տոկոսագումարը հաշվարկվում է ավանդի բացման ամսաթվից մինչև ավանդի վերջնաժամկետը (տոկոսագումարը չի հաշվարկվում ավանդի վերջնաժամկետի օրը):